

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան

Բնապահպանական կրթության փոքր ծրագրերի մրցույթ

«Չորս տարրերք» բնապահպանական-ուսուցողական ծրագրի
անցկացման հաշվետվություն

- **Անցկացման վայրը** - Շիրակի մարզի Վահրամաբերդ և Հայկավան գյուղական համայնքներ
- **Անցկացման ամսաթիվը** - 2016թ մայիսի 26ից- 30 հունիսի,
- **Մասնակիցները** - Վահրամաբերդ և Հայկավան գյուղական համայնքների միջնակարգ դպրոցների 9-րդ դասարանի աշակերտներ,
- **Ծրագրի նպատակը** Ծրագրի հիմնական նպատակը վերոնշյալ համայնքների հիմնական դպրոցների 9-րդ դասարանների աշակերտների մեջ սերմանել և զարգացնել սերը դեպի բնությունը և շրջակա միջավայրը: Ձևավորել ապագա էկոլոգիական մտացելակերպ ունեցող քաղաքացիների, ովքեր իրենց փորձն ու գիտելիքները կփոխանցեն իրենց ընկերներին և շրջապատին:
- **Ծրագրի ընթացքը** - Ծրագրի ընթացքում իրականացվել են 4 ական սեմինարներ յուրաքանչյուր համայնքում: Սեմինարները եղել են տարաբնույթ թեմաներով, որոնք ներառել են ինչպես տեղական՝ լոկալ, այնպես էլ գլոբալ հիմնախնդիրներ:

Ծրագրի ընթացքում սեմինարների անցակման փուլում աշակերտներին ներկայացվել են աշխարհագրական թաղանթի բաղադրիչների մասին առանձին սեմինարներ համապատասխանաբար՝

1. **Մթնոլորտ** (կառուցվածքը, դերն ու նշանակությունը մարդու կյանքում, առկա հիմնախնդիրները, դրանց զարգացման հեռանկարները, հնարավոր լուծումները)
2. **Քարոլորտ** (կառուցվածքը, դերն ու նշանակությունը մարդու կյանքում, առկա հիմնախնդիրները, դրանց զարգացման հեռանկարները, հնարավոր լուծումները)
3. **Ջրոլորտ** (կառուցվածքը, դերն ու նշանակությունը մարդու կյանքում, առկա հիմնախնդիրները, դրանց զարգացման հեռանկարները, հնարավոր լուծումները)
4. **Կենսոլորտ** (կառուցվածքը, դերն ու նշանակությունը մարդու կյանքում, առկա հիմնախնդիրները, դրանց զարգացման հեռանկարները, հնարավոր լուծումները)

Այնուհետև սեմինարների ավարտից հետո ծրագրերի մասնակիցների հետ կազմակերպվեցին ուսուցողական կինոդիտումներ և քննարկումներ համապատասխան թեմաներով: Ուսուցողական ֆիլմերն էին՝

1. **«Օզգի օգոն»** – մթնոլորտի մասին
2. **«Հայաստանի կոտրվող ողնաշարը»** – քարոլորտի մասին
3. **«Շիրակի խամրող գույները»** – ջրոլորտի մասին
4. **«Человек, который сажал деревья»** – կենսոլորտի մասին

Հաջորդ քայլով մասնակիցների հետ իրականացվեց պաստառների պատրաստումը: Պաստառները պատրաստվում էին կազմակերպված ինտելեկտուալ խաղի արդյունքների հիման վրա: Մասնակիցներին ներկայացվում էին հարցեր քննարկած թեմաներից և ճիշտ պատասխանի դեպքում ստանում էին համապատասխան հուշում: Պաստառները ունեն թեմատիկ բնույթ և ներկայացնում են «Աշխարհագրական թաղանթը, նրա բաղադրիչները»: Ծրագրի երկրորդ հատվածում ծրագրի շրջանակներում մասնակիցների համար կազմակերպվեցին 4 մասնագիտական սեմինարներ - Յուրաքանչյուր սեմինարավարի կողմից մատուցվեց 2-ական սեմինարներ հետևյալ թեմաներով՝ «Անտառներ, նրանց կառուցվածքը», «Անտառների նշանակությունը տնտեսության մեջ և հանգստի կազմակերպման գործում», «Էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրները», «Այլընտրանքային էներգետիկայի զարգացման հեռանկարները աշխարհում և ՀՀ-ում»:

Վերջին փուլով երկու համայնքների աշակերտների համար կազմակերպվել է ուսուցողական և պրակտիկ էքսկուրսիա: Էքսկուրսիայի երթուղին կազմակերպվել է այնպես, որպեսզի աշակերտները կարողանան օգտագործել ծրագրի ընթացքում իրենց ստացած գիտելիքները պրակտիկորեն՝ հեռահար ուսումնասիրության միջոցով գնահատական տալ լանդշաֆտների փոփոխություններին: Էքսկուրսիան կազմակերպվել է Գյումրի-Ստեփանավան ուղղությամբ, այնպես որ երեխաները հնարավորություն ունենան տեսնել՝

- **Ջաջուռի ջրամբարի** էֆտրոֆիկացիան (ճահճակալում)
- **Գյումրի-Վանաձոր** ճանապարհին գտնվող հատվածներ, որոնք դեգրադացված են անթրոպոգեն ազդեցությամբ՝ շինարարական աղբի հսկայան կույտեր
- **Ջաջուռի լեռնանցքում** կտեսնեն մարդու կողմից ստեղծված անտառները
- **Վանաձորի մոտակայքում** կտեսնեն բաց հանք և նրա բացասական ազդեցությունը տեղանքի և մթնոլորտի վրա
- **Ստեփանավանի դենդրոպարկ**, որտեղ երեխաները կձանոթանան յուրահատուկ բուսատեսակներին և կտվորեն, թե ինչպես ճիշտ խնամե լճառերը և բույսերը:

- Այլ - հաշվետվությանը կից ներկայացվում են նաև՝
 - Մեմբերների անցկացման լուսանկարներ
 - Մեմբերների մասնակիցների ցուցակ
 - Պրեզենտացիա ծրագրի իրականացման մասին
 - Մասնագիտական սեմինարների հաշվետվություն
 - Գնահատման թերթիկներ